

Արձանագրություն №5/2021-2022

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 69-ը (վաթսունինը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը հետևյալ փոփոխություններով ու լրացումներով. օրակարգից հանել և հաջորդ նիստի օրակարգ տեղափոխել 3-րդ և 4-րդ հարցերը, ընթացիկ հարցերի թվում ներառել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 2021թ. հաշվետվությունները:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը՝ առաջարկված փոփոխություններով ու լրացումներով:

1. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. Հաղորդում ԵՊՀ զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2020-2021 ուստարի) մասին (զեկ.՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
3. Հաղորդում ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյան):
4. Հաղորդում ԵՊՀ 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյան):
5. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2020-2021 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ մասնաճյուղի տնօրենի Ժ/պ Ա. Մակարյան):
6. Հաղորդում 2021-2022 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյան)

Ընթացիկ հարցեր

7.1. ԵՊՀ պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանի կանոնադրության հաստատում:

7.2.«Աղբբեջաներեն» դասագիրքը (հեղ.՝ Լ. Մովսիսյան) վերահրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՍՆ-ին միջնորդելու մասին:

1.Լսեցին.-Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին: Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց, որ հանձնաժողովն ուսումնասիրել է պրոֆեսորի գիտական կոչման 2 և դոցենտի գիտական կոչման 4 հավակնորդների ներկայացրած փաստաթղթային փաթեթները, ինչի արդյունքում պրոֆեսորի գիտական կոչման 2 հավակնորդները և դոցենտի գիտական կոչման 3 հավակնորդները ստացել են դրական երաշխավորություն և ներկայացվել գիտական խորհրդի հաստատմանը:

Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Բաղդասարյան Հասմիկ Գրիգորի	Ռոման. բանասիր. ամբ. դոցենտ
2.	Գևորգյան Գուրգեն Անուշավանի	Թարգմ. տես. և պրակտ. ամբ. դոցենտ

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Մադոյան Արփինե Համլետի	Անգլ. բանասիր. ամբ. ասիստենտ
2.	Ղանալանյան Տիգրան Հայկի	Հայ. պատմ. ամբ. ասիստենտ
3.	Ալթունյան Կատերինա Վանիկի	Հանր. կառավ. ամբ. ասիստենտ

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Արամ Սահարյան (նախագահ)
2. Ժասմեն Աղասյան
3. Սյունե Ստեփանյան

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 69 անդամներից 61-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Սահարյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Բաղդասարյան Հասմիկ Գրիգորի	59	2
2.	Գևորգյան Գուրգեն Անուշավանի	56	4

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Մադոյան Արփիինե Համլետի	61	0
2.	Ղանալանյան Տիգրան Հայկի	58	3
3.	Ալթունյան Կատերինա Վանիկի	61	0

Որոշեցին. - Դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2.Լսեցին.- Հաղորդում ԵՊՀ զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2020-2021 ուստարի) մասին: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների մասով ցուցիչները հիմնականում կատարվել են: Նա հայտնեց, որ ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագիրը հաստատվել է հոգաբարձուների խորհրդի կողմից և ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում առաջակներից է եղել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում ունենալը՝ իրենց ֆինանսական բաղադրիչներով, ինչի ուղղությամբ քայլեր են արվում: Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ ռեկտորի նախկին ժ.պ. Գ. Գևորգյանն ի լրումն նշեց, որ անցած տարի նախորդող 5 տարվա աշխատանքի արդյունքում առաջին անգամ հայաստանյան բուհերի շարքում ԵՊՀ-ն ստացել է հավատարմագրում՝ դրական ստանալով բոլոր տասը կետերով: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նկատեց, որ ԵՊՀ-ն հետայսու ևս պետք է տարբերվի բուհական համակարգում՝ առաջնային խնդիր

սահմանելով բուհի միջազգայնացումը, ինչի ուղղությամբ արդեն հստակ քայլեր են արվում:

Որոշեցին. - ԵՊՀ զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2020-2021 ուստարի) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

3.Լսեցին.- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2020-2021 ուստարվա գործունեության մասին: Մասնաճյուղի տնօրենի Ժ/պ Ա. Մակարյանը նշեց, որ ԻՄ-ն իր գործունեությունն իրականացրել և իրականացնում է սահմանված նպատակներին ու առաքելությանը համապատասխան: Ըստ այդմ՝ 2020-2021 ուստարվա համար Իջևանի մասնաճյուղը բակալավրի առկա ուսուցմամբ ընդունելություն է իրականացրել 11 մասնագիտությունների 12 կրթական ծրագրերով, հեռակա ուսուցմամբ՝ 7 կրթական ծրագրերով, մագիստրատուրայի՝ 1 ծրագրով: 2020-2021 ուստարվա համար մասնաճյուղ դիմել է 439 դիմորդ, այդ թվում բակալավրի առկա ուսուցման համար 266-ը, հեռակա ուսուցման համար 135-ը, մագիստրատուրայի համար՝ 38-ը: Ըստ ներկայացված հաշվետվության՝ առկա ուսուցման բակալավրի դիմորդների կազմը ձևավորվում է հիմնականում Տավուշի մարզից և հաշվետու ուստարում կազմել է ընդհանուր թվի 94.4%-ը: 2020-21 ուստարվա ընդունելության քննությունների արդյունքներով մասնաճյուղ ընդունվել է 325 դիմորդ, այդ թվում առկա ուսուցմամբ՝ 212(80%-ը), հեռակա ուսուցմամբ՝ 88(65%-ը), մագիստրատուրա՝ 25 (66%-ը), որոնք լավ ցուցանիշներ են տարածաշրջանային բուհի համար:

Ա. Մակարյանի ներկայացմամբ՝ երկար տարիներից հետո մասնաճյուղը ընդունելություն է կազմակերպել մագիստրոսական 1 ծրագրով՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», որը նպատակ ունի աջակցել մարզի հանրությանը՝ ձեռք բերել երկրորդ մասնագիտություն և դպրոցներն ապահովել անհրաժեշտ կադրերով: Վերջին 4 ուստարիների ընթացքում առաջին անգամ գրանցվել է ուսանողական համակազմի աճ. հաշվետու ուստարում կրթական բոլոր աստիճաններում միասին հաշված մասնաճյուղում սովորել է 1288 ուսանող, որը 75-ով ավել է նախորդ տարվա թվաքանակից: 2020-2021 ուսումնական տարում առկա և հեռակա ուսուցմամբ մասնաճյուղն ունեցել է ընդհանուր 365 շրջանավարտ, այդ թվում առկա ուսուցմամբ 10 կրթական ծրագրով՝ 150 շրջանավարտ (39 անվճար, 111 վճարովի) և հեռակա ուսուցմամբ 7 կրթական ծրագրով՝ 215 շրջանավարտ: Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարել են 3 առկա ուսուցման բոլոր շրջանավարտները, իսկ հեռակա ուսուցման շրջանավարտների 94.4%-ը (8 ուսանող չի ներկայացել, 4 ուսանող ստացել է անբավարար):

Նրա դիտարկմամբ՝ 2020-21 ուստարվա համավարակային վիճակը ուսանողներին և դասախոսներին ստիպեց կիրառել հաղորդակցվելու և ուսուցումը կազմակերպելու նոր

եղանակներ: Մասնաճյուղում բավականին հաջողությամբ թե՛ կառավարումը, և թե՛ ուսումնական գործընթացը անհրաժեշտության դեպքում իրականացվել են առցանց:

Հաշվետու ուստարում կրթական նորամուծությունը՝ հետազոտական բաղադրիչի ներդրումն էր կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում, ինչը ուսանողների շրջանում առաջացրել է հետաքրքրվածություն և ոգևորություն:

Ըստ ներկայացված տվյալների՝ մասնաճյուղում դասավանդել և իրենց գիտահետազոտական գործունեությունն են իրականացրել հիմնական ու ԵՊՀ-ից հրավիրված 84 դասախոս, որոնցից 46-ը (55%-ը) գիտական աստիճանով, այդ թվում 5 (6%) պրոֆեսոր, 31 (37%) դոցենտ, 48 (57%) ասիստենտ ու դասախոս: 2020-21 ուստարում մասնաճյուղի դասախոսները հրատարակել են 2 մենագրություն, 1 դասագիրք, 28 հոդված, մասնաճյուղի գիտական խորհուրդը երեք աշխատակցի երաշխավորվել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար, մեկ դասախոս պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, մեկը ստացել է դոցենտի գիտական աստիճան:

Ա. Մակարյանը նշեց, որ դասախոսների գիտական գործունեությունը խթանելու համար մասնաճյուղը կիրառում է խրախուսման տարբեր մեխանիզմներ, այդ թվում նաև ֆինանսական: «ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգի պահանջներին բավարարող 9 աշխատակցի վճարվելու է 650.000 ՀՀ դրամ: ԻՄ-ում գիտական և հետազոտական կյանքի ակտիվացման և աջակցման գործում իր էական դերն է ունեցել 2020թ. դեկտեմբերին հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը: Այն նպատակ ունի մասնաճյուղի գիտական ներուժի, աշխատակիցների և ուսանողների ներգրավմամբ իրականացնել հետազոտություններ մարզի տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների զարգացման համար: 2021թ. մասնաճյուղում հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ, որին մրցութային հանձնաժողովի կողմից ընդունվել է 6 հայտ: Փորձագիտական գնահատումների հիման վրա ֆինանսավորման է երաշխավորել 4 թեմա:

Հաշվետվության համաձայն՝ մասնաճյուղն իրականացնում է տարածաշրջանային, հանրապետական և միջազգային համագործակցային մի շարք ծրագրեր, զարգացնում է կապերը հայաստանյան բուհերի և զանազան կազմակերպությունների հետ տարբեր ոլորտներում, ինչի վկայությունն են միայն 2020-21 ուստարում կնքված համագործակցության 16 հուշագրերը: Հաշվետու ուստարին առանձնատուկ է եղել ենթակառուցվածքների համալրման առումով: 2020-21 ուստարվա ընթացքում մասնաճյուղի տարածքում բացվել են ժամանակակից սարքավորումներով հագեցած 3 կենտրոն, մեկ լաբորատորիա և մեկ հիշատակի լսարան: Ա. Մակարյանի ներկայացմամբ՝ հաշվետու ուստարում վերանայվել են մասնաճյուղի բոլոր 12 կրթական ծրագրերը, պատրաստվել և վերանայվել է «Դպրոցական մանկավարժություն և

մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագիրը, առանձին կազմվել են կրթական ծրագրեր նաև հեռակա ուսուցման մասնագիտությունների համար:

Մասնաճյուղն իր ֆինանսական միջոցներից 2020-2021 ուստարվա համար ուսանողական նպաստի ձևով 15 ուսանողի տրամադրել է 100% փոխհատուցում, կատարել ուսման վարձավճարի 234 մասնակի փոխհատուցում: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ ԻՄ-ը բավական ակտիվ գործունեություն է ծավալու, որոշ խնդիրներ են եղել մասնաշենքերից մեկի հետ կապված, որոնց լուծման ուղղությամբ քայլեր են իրականացվում: Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը հայտնեց, որ Գուրգեն Մելիքյան հիմնադրամը պատրաստակամ է մասնաճյուղի սոցիալապես անապահով 5 ուսանողի տրամադրել ուսման վարձի լրիվ փոխհատուցում և խնդրեց ներկայացնել հավակնորդ ուսանողների տվյալները:

Որոշեցին. - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2020-2021 ուստարվա գործունեության մասին հաշվետվությունը գնահատել բավարար:

4.Լսեցին.- Հաղորդում 2021-2022 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց, որ ուսումնական բեռնվածությունների ընդհանուր գումարային ժամաքանակը կազմել է 252.570 ժամ, որը մոտ 43 հզ. ժամ պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Ըստ ուսումնական աշխատանքի տեսակների ամենամեծ ծավալը կազմում են գործնական և սիմինար պարապմունքները, դասախոսությունները, այնուհետև աշխատանքների ղեկավարումը, քննական և ստուգարքային ժամերը և այլն: Բեռնավծությունները ըստ դրույքների բաշխման կազմել են 830.75 դրույք, ինչը 55 դրույքով պակաս է նախորդ ուստարվա արդյունքներից: Ժամավճարային ֆոնդը կազմել է 61610 ժամ, ինչը 5625-ով պակաս է անցած տարվա ցուցանիշից: Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի թիվը, մինչև 35 տարեկանները, մի փոքր աճել է, նվազել է միջին տարիքի դասախոսների թիվը և ավելացել է 66 և բարձր տարիք ունեցող դասախոսների թիվը: Հիմնական դասախոսական կազմի թիվը նախորդ տարվա համեմատ պակասել է 19-ով: Ներքին համատեղությամբ դասախոսների թիվը որոշ չափով ավելացել է, սակայն նվազել է արտաքին համատեղությամբ դասախոսներինը: Հ. Ժամհարյանը նշեց, որ բավականին ավելացել է արտաքին ժամավճարով երիտասարդ դասախոսների թիվը: Վերջինս ամփոփեց ընդհանրական տվյալները՝ նշելով, որ ուսումնական գործընթացում ներգրավված են 1675 դասախոս նախորդ տարվա 1310-ի փոխարեն և նկատվում է մինչև 35 տարեկան դասախոսների թվի ավելացում: Ուսանողական խորհրդի նախագահ Դ. Ափոյանը հետաքրքրվեց ժամային ծանրաբեռնվածությունների նվազման հետ դասախոսական կազմի թվի որոշակի աճի փոփոխությունների մասին, ինչին ի պատասխան Հ. Ժամհարյանը նկատեց, որ դա պայմանավորված է ուսանողական թվի

նվազման հետ, իսկ դասախոսական համակազմի ավելացումը պայմանավորված է ամբիոններում ոչ լրիվ դրույքներով աշխատողների թվի աճով: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ղեկանի տեղակալ Գ. Բարխուդարյանը նշեց, որ ուսումնական բեռնվածությունների հետ կապված լինում են բազմաթիվ դժվարություններ, օրինակ, երբ դասախոսը բազմաթիվ աշխատանքներ է կատարում, որոնք արտացոլված չեն ուսումնական ծանրաբեռնվածությունների նորմերում, ապա հարց ուղղեց, թե արդյո՞ք նորմերի հիմքում կան հաշվարկներ, վերլուծություններ: Հ. Ժամհարյանն ի պատասխան նշեց, որ նորմերը սահմանվել են համապատասխան հանձնաժողովում, անցել քննարկում, ստացել բազմաթիվ առաջարկություններ ֆակուլտետներից և հաստատվել գիտական խորհրդում: Ըստ նրա՝ կան դասախոսներ, որոնք իրենց հասանելիք աշխատանքը չեն կատարում: Բազմաթիվ դեպքեր են լինում, երբ դիսպետչերական ծառայությունը ֆիքսում է դասերի չկայացման փաստեր, ինչը պետք է լինի նախ և առաջ ղեկանատի աշխատանքի և կարգապահական մշակույթի տիրույթում: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը անհասկանալի համարեց ԵՊՀ-ում դիսպետչերների ծառայության առկայությունը, քանի որ ղեկանները և ամբիոնի վարիչները, կրթական ծրագրերի ղեկավարները պատասխանատու են ամեն մի դասի կայացման համար, և դա չպետք է լինի ռեկտորատի գործառույթը: Նա նշեց, որ որոշվել է թեթևացնել դիսպետչերական ծառայությունը, ստուգումները դարձնել պատահականության սկզբունքով և սահմանել խիստ կարգապահական պատիժներ՝ կարևոր համարելով ուսանողական կառույցների դերը: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նկատեց, որ երբեմն կրթական ծրագրերի որակն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնական գործընթացում ներգրավել գիտական աստիճան չունեցող, սակայն պրակտիկ մեծ փորձ ունեցող մասնագետների, բայց այդ հարցում խնդիրներ են առաջանում: Ըստ նրա՝ ծանրաբեռնվածությունը բաշխելիս պաշտպանած և չպաշտպանած դասախոսների շեմ կա, ինչը սահմանափակող գործոն է, ուստի հնարավորության դեպքում հատկապես մագիստրատուրայում անհրաժեշտ է վերանայել այդ շեմը և սահմանափակումները որոշակիորեն մեղմացնել: Հ. Ժամհարյանը նշեց, որ փորձառու մասնագետի հրավիրելու ֆակուլտետի դիմելու դեպքում որպես կանոն խոչընդոտ չի լինում: Վ. Հովհաննիսյանը ավելացրեց, որ ուսումնական գործընթացում որոշ պրակտիկ դասախոսների ներգրավման հարցում անհրաժեշտ է դառնում թեկնածուական ատենախոսություն պաշտպանելու պարտավորության ստանձնումը, ինչը պրակտիկ աշխատանքի պարագայում բավական խնդրահարույց է: Հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան Ա. Ավագյանը բարձրացրեց 1 դրույքի համար 700 ժամ ծանրաբեռնվածության թեթևացման խնդիրը, ինչին ի պատասխան ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ դա հնարավոր է առարկաների կրեդիտատարության բարձրացման, հոսքերի մեծացման ու առարկաների կրճատման դեպքում, քանի որ իրականում 8-9 առարկաների առկայությունը չափազանց

ծանր է: Ըստ նրա՝ անհրաժեշտ է ոչ թե մտածել այդ 700 ժամը օպտիմալացնելու, այլ մի քայլ ավելի առաջ կատարելու մասին: «Բարձրագույն կրթության ու գիտության մասին» նոր օրենքի ընդունման դեպքում, որում սահմանված է կրեդիտների համակարգը, վարձատրությունը լինելու է ըստ կրեդիտների, ինչը ամբողջովին նոր մոդել է ենթադրում: Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ ռեկտորի նախկին ժ.պ. Գ. Գևորգյանը համամիտ լինելով վերոնշյալ մոտեցմանը՝ նշեց, որ համակարգը արմատապես վերափոխման կարիք ունի, և դրա լուծումը կրեդիտային համակարգի անցումն ու առարկաների թվի կրճատումն է, քանի որ ուսանողի համար արդյունավետ չէ կիսամյակում 8-9 առարկաների արդյունավետ յուրացումը: Գ. Գևորգյանն առաջարկեց ստեղծել հանձնաժողով վարձատրման նոր ու կրեդիտային համակարգի անցման խնդիրները ուսումնասիրելու համար:

Պրոռեկտոր Է. Ասրիյանը, անդրադառնալով բեռնվածության հաշվարկի նորմերին, նշեց, որ 2020թ. մարտին հաստատված դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի հիմքում եղել են վերլուծություններ, աշխատել է հանձնաժողով, որը պատրաստել է նախագիծ, ուղարկել ֆակուլտետներ, ստացել առաջարկներ, բոլորը քննարկել և ներկայացրել գիտական խորհրդի հաստատմանը: Ըստ նրա՝ յուրաքանչյուր փաստաթուղթ բարելավման կարիք է զգում և դրա անհրաժեշտության դեպքում կրկին կարելի է վերանայել:

Որոշեցին. - 2021-2022 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

5.Լսեցին.- ԵՊՀ պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանի կանոնադրության հաստատման մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ կանոնադրության նախագիծը քննարկվել է իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովում և ստացել դրական երաշխավորում: Կանոնադրության մեջ ֆիքսված են թանգարանի հիմնական գործառույթները, կառավարումը և եզրափակիչ դրույթները:

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանի կանոնադրությունը:

6.Լսեցին.- «Աղբբեջաներեն» դասագիրքը (հեղ.՝ Լ. Մովսիսյան) վերահրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ այդ աշխատանքը ԵՊՀ-ի կողմից հրատարակվել է դեռևս 2019թ., անցել է ուսումնական փորձաքննություն, կիրառվել ուսումնական գործընթացում և այժմ ներկայացված է դրա վերախմբագրված, լրամշակված տարբերակը: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը կարևորեց աղբբեջանագիտության ծրագրի զարգացման խնդիրը՝ նշելով, որ այդ հարցում եղել են մեծ բացթողումներ և հսկայական անելիքներ կան, ինչի հետ կապված

արևելագիտության ֆակուլտետի հետ քննարկումներ են եղել: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը նշեց, որ այդ ուղղությամբ մշակված աշխատանքներ են տարվում, սակայն չհամաձայնեց Հ. Հովհաննիսյանի ձևակերպման հետ՝ նշելով, որ արևելագիտության ֆակուլտետը բախվել է պետական անտարբերության հետ:

Որոշեցին.- «Ադրբեջաներեն» դասագիրքը (հեղ.՝ Լ. Մովսիսյան) երաշխավորել վերահրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

7.Լսեցին.- ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 2021թ. հաշվետվությունների մասին: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը ընդհանուր տվյալներ ներկայացրեց գիտահետազոտական աշխատանքների մասին՝ նշելով, որ գիտական հրապարակումների որոշակի ցուցանիշային նվազում կա, ինչը պայմանավորված է հաշվետվության ցիկլերի տարբերությամբ: ԵՊՀ «Intranet» համակարգում ներբեռնված հոդվածների թիվը կազմել է 917, որից 220-ը «Scopus» և «WoS» շտեմարաններում ներառված պարբերականներում, 157-ը՝ ազդեցության գործակից ունեցող պարբերականներում, 357-ը՝ ԲՈԿ-ի պարբերականներում և այլն: Բոլոր լաբորատորիաներում, կենտրոններում ու ինստիտուտներում ընդգրկված գիտաշխատողների թիվը կազմել է մոտ 400, որից մոտ 200-ն է հիմնական ներքին համատեղությամբ աշխատող: Մովորող անդամ Ն. Մարգարյանը հետաքրքրվեց ԵՊՀ պարբերականների միջազգային շտեմարաններում ներառվելու գործընթացի մասին, ինչի վերաբերյալ Ռ. Բարխուդարյանը նշեց, որ դա երկարատև գործընթաց է, այդ ուղղությամբ քայլեր արվում են և կան պարբերականներ, որոնք հայտ ներկայացրել են: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը կարևորեց միջազգային շտեմարաններում և հրատարակություններում ընդգրկված գիտական հրապարակումների թվի ավելացումը՝ նշելով, որ ռեկտորատն ամեն ինչ անելու է դա խրախուսելու համար: Ըստ նրա՝ նախատեսվում է կրկնապատկել միջազգային գրախոսվող պարբերականներում տպագրվող հոդվածների համար տրվող լրավճարները: Ամեն կերպ խրախուսվելու է դասախոսների հետազոտական աշխատանքը, տարբերակում է դրվելու հետազոտող դասախոսների և դասավանդող դասախոսների միջև: Ամենամեծ խնդիրը շարունակում է մնալ երիտասարդացումը: Հաջորդ տարի վարչական ապարատում նախատեսվում են տարբեր փոփոխություններ, օրինակ, կձևավորվեն ռազմավարական պլանավորման և շարունակական կրթության կառույցներ, որոնք պետք է նպաստեն կրթության արդյունավետության բարձրացմանը: Մեծապես պետ է արժևորվի կրթական ծրագրերի ղեկավարների դերը, ովքեր լինելու են կրթական վերջնարդյունքների հիմնական պատասխանատվություն կրողները: Ըստ Հ. Հովհաննիսյանի՝ բարեփոխումների ճանապարհը միշտ ցավոտ է, սակայն անհրաժեշտ է

լինում բարելավման համար, ուստի նոր մոտեցումներով ու նոր գաղափարներով երիտասարդացման խնդիրն անխուսափելի է լինելու: Անդրադառնալով ԵՊՀ պարբերականների միջազգայնացմանն ու միջազգային հրապարակումների խրախուսմանը՝ Ռ. Մելքոնյանը դիտարկում արեց, որ չնայած ողջունելի է միջազգայնացումը, սակայն դա կարող է անհավասար մրցակցության մեջ զցել հայաստանյան հայալեզու պարբերականները և, բացի դա, այդ ամսագրերում տպագրվող հետազոտությունները շատ դեպքերում հնարավոր չէ տպագրել միջազգային պարբերականներում: Մյուս կողմից էլ անհավասար մրցակցություն է ստացվում բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ոլորտում, քանի որ հումանիտար ոլորտում բավական բարդանում է: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ գիտական քաղաքականության վարչությանը հանձնարարել է հաշվել համապատասխան կայֆիցենտները՝ հումանիտար ոլորտում բարձրացնելու համար: Իսկ ինչ վերաբերում է տեղական հայալեզու պարբերականներին, ապա մրցակցությունը բնական է, և այն մարդիկ, ովքեր չկարողանան անգլերեն լեզվով միջազգային պարբերականներում տպագրել իրենց աշխատանքները, կարող են տպագրել տեղականներում, որտեղ լրավճարը մեծ չի լինի և դժվար թե այդ պարբերականների վերացման վտանգ առաջացնի: Գիտական խորհրդի սովորող անդամներից հարց բարձրացվեց գիտական խորհրդի նիստերի տեսաձայնագրությունների չհրապարակման վերաբերյալ, ինչին ի պատասխան՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ նիստերը զուտ ներքին քննարկումներ են և, գտնվելով այլ բուհերի հետ մրցակցության մեջ, նպատակահարմար չէ բուհի ներքին «խոհանոցը» հրապարակայնացնել, ինչը միջազգային պրակտիկայում ևս ընդունված չէ:

Որոշեցին.- ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 2021թ. հաշվետվությունները :

Գիտական խորհրդի նախագահ՝

Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

29.12.2021թ.